ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐ

28.02.2024 16:03

Հարգելի՛ գործընկերներ,

ՀՀ փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբը 2024թ. **մարտի 16-ին** (շաբաթ) ժամը 11:00-15:00-ն կազմակերպում է «**Փաստաբանների շախմատի գավաթ 2024»** մրցաշար**:** Մրցաշարը տեղի կունենա ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքի 4-րդ հարկում (հասցեն՝ ք. Երևան Ջաքյան 7-2):

Շախմատի մրցաշարին կարող են մասնակցել ՀՀ փաստաբանների պալատի և Արցախի փաստաբանների պալատի փաստաբանները, Փաստաբանական ակադեմիայի ունկնդիրները, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի և Փաստաբանական ակադեմիայի աշխատակազմերի աշխատակիցները:

Մասնակցության ցանկության դեպքում անհրաժեշտ է մինչև սույն թվականի **մարտի 14-ը** զանգահարել 010 600 701 հեռախոսահամարին կամ հետադարձ հաղորդագրությամբ հայտնել այդ մասին՝ նշելով Ձեր անունը, ազգանունը, արտոնագրի և հեռախոսի համարները:

Մրցաշարում 1-ից 4-րդ տեղերը զբաղեցրած մասնակիցները կպարգևատրվեն պատվոգրերով և մեդալներով:

Մրցաշարի արդյունքներով լավագույն խաղացողներից կձևավորվի ՀՀ փաստաբանների պալատի շախմատի հավաքական թիմը (կամ թիմերը):

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })